ցանկալի նմա և ըստ կարի օժանդակ լինել յաջողման ատացեալ նպատակացն։»

ԱՂԱՆՈՒՐ ՊԵՏՐՈՍ ԱՂԱՆՈՒՐԵԱՆՑ.

1876 Յունիս 10 (Ն. Տ.)

Մոսկուա։

Այս պատճէնէ (զոր շատոնց ստացած եմք եւ անուշադիր պիտի թողնէինք եթէ այս օրերս եւս լրագրաց մէջ երկար եւ ստայօդ հրատարակութիւնք չտեսնէինք) ինչպէս նաեւ Մոսկովսկիյա Վեդոմոստի բաժնի մէջ օրինակուած մի նամակէ՝ ուշադիր ընթերցողն կընկատէ՝ Ջոն Բուլ չէ ուռի նման անձանց պատճառաբանութիւնքը եւ դաւաճանութեանց շարժառիթները՝ որով չարաչար կըսրտնեղին՝ որ Թեմական — Առաջնորդն ինչու համար Հնդկաստան այցելութեան կերթայ եւ Ջուղայէն կըացակայի, եւ միեւնոյն անձն եւ նմանքն են՝ որ ուրիշ անգամ եւս հրատարակած են՝ թէ ինչու համար Հնդկաստանը Առաջնորդաց այցելութիւններէն ետն զուրկ մնացած է։

Աւելի հետաքրքիր լինել եւ գնել չեմք ուզեր այսպիսի անձանց եւ դաւաճանութեանց նկատմամբ՝ թէպէտ քաջ գիտեմք շարժառիթները եւ օտարին Ռուսաստանը, եւ միշտ անուն եւ պատիւներուն խնայելով՝ ընդ քօղով անցած եմք եւ պիտի անցնիմք՝ ինչպէս որ կալկաթաբնակ Չեռնայեւը եկեղեցականէ նըկատմամբ եւս առ այժմ այսպէս վարուելով, կյիշեցնեմք Թադէոս Մովսէսեան. Եպիսկոպոսաց դէմ գործածները եւ փոխադարձաբար կրածները, եւ եթէ չուզեր ի ծերութեան հասակին

դառնութեամբ . . . . ի գերեզման իջանել, թող այլ եւս զգաստանայ եւ զգուշանայ՝ եւ երբէք իւր գիղած հարստութեան գումարներուն վերայ չապաւինի։ . . . . .

Ի ՏՓԽԻՍԱՅ.

(Անցեալ Թուէն Շարունակ).

3.) Այլ և յայտնած է յօդուածումս թէ կայր մի տուն գալթումբ արժողութեամբ 5000 ռուբ. որ կբերէր 300 ռուբլի արդիւնք. Հարկաւոր է դարձնել ուշադրութիւնը ընթերցողաց զի այս տունը շինած էր կուրից և այնպէս յինուած էր մի հին ճեղքուած երկյարկ տան՝ որ երբ այս հին տունը քանդուէր, նոյն 5000 ռուբլանոց անուանեալ տունն ինքն ըստ ինքեան պիտի անկանէր, որովհետև նորա պատը հին տան պատի վերայ էր ամրացած. Գրէ թէ 300 ռուբլիինք էր բերում. այդ եւս սուտ է. Այս տանը բնակվումէր Մուշեղ քահանայն և վճարում էր ամսական 10 ռ, ուրեմն 120 ռ, տարեկան. Իսկ պահոյան անուանեալ տունը ճեղքուած էր և մերձ էր անկման, որպէս յայտնի է այս ակտից, կազմեալ նահանգական ճարտարապետ Արեստալամօվից և Պօլիցէյսկի Աֆիցերից ի 28 Սեպտեմ. 1874 ամի, որ և գտանի առ իս. Իսկ ինչ վերաբերի Պ. Ա. եանի տանը, որ նա իբր առաջարկումէր վաճառել եկեղեցւոյն 8000 ռուբլով, սուտ է բոլորովին, որովհետև այդ գնով նա երբէք համաձայնած չէ տալու իւր կալուածքը. Ինչպէս լսել եմ՝ մինչև անգամ այս ամառ և ս առաջարկուել է նրան նոյն տան համար 8000 ռուբլի. բայց նա բացէ ի բաց մերժել է այս առաջարկութիւնը. բացի սրանից նորա գինը անձեռնատու համարուեցաւ, որովհետև նորա շինութիւնը բոլորովին անպիտան էր ուսումնարանի համար՝ որպէս հնութեան պատճառաւ, նմանապէս որ կուէ (ցխէ) շինութիւն էր և խարխուլ

վան որոյ կհարկաւորէր զկնի փնելոյն շուտով քանդել և նորա տեղը նոր տուն կառուցանել, որոյ վերայ կերթար ծախք մեծ գումար դրամոց որ եկեղեցին չունէր.

Երկրորդ. Յայտնի է ամենեցուն, որ վասըն հսկողութեան ի վերայ շինութեանց անշուշտ հարկաւոր է ունենալ մի հաւատարիմ և հմուտ ի գործս շինութեան անձն, որ առաւօտից մինչև երեկոյ կանգնած լինելով վարպետների և մշակների վերայ՝ յորդորէ և քաջալերէ նոցա. Թէպէտ և կային բազումք յաշխարհականաց, որք ցանկային ունել այս յանձնարարութիւնը, բայց արովհետև Մողնւոյ եկեղեցւոյ աւագ քահանայ Զաքար Տէր Գրիգորեանցը որպէս հաւատարիմ եկեղեցւոյ և հմուտ ամենից յայս գործ, ըստ առաջարկութեան իմոյ յանձն առաւ այս աշխատանքը. ուստի և յանձնուեցաւ նմա ամսական 30 ռուբ. վարձով. Այս ևս պարտիմ յայտնել, որ այս ամսական վարձը կէսը ստանումէր նա ինձանից յեկեղեցական արդեանց, իսկ միւս կէսը կապալառու Սարգիս Պօպովից այն պատճառաւ, որ Պօպովը շտապի շուտով աւարտել շինութիւնն և ազատուի տալուց Զաքարիա քահանային ամսական վարձ.

Քանդուած տների նիւթեղէնները, որպէս վերևը յայտնած է, կապալառու Պօպովն վեր էր առել իւր հաշւումը 1000 ռուբլով և եթէ նիւթեղէններից տարած են լինին կամ քահանայք և կամ այլք, այդ չէ կարող վերաբերիլ եկեղեցւոյն, այլ կապալառուին, որպէս նորա սեփականութիւն.

Գրէ Պ. Ե. եանցը, թէ էն միջոցում և սենեակների ներկարար Մ. անվարձ քանի մի սենեկի ձեանկալը թերթերը է ստանձել . . . . եանցի բնակարանումը և քանի մի դռներ, լուսամուտների տախտակներ և յատակներ ներկել դեղով.

Ի բացատրութիւն այս յօդուածի պարտաւորութիւն եմ համարում յայտնել թէ՝ Պ. Յօդուածագրողը յայժ սխալ է իւր հաշւումը. Թէպէտ և շատ է ցանկանում և աշխատում զի որպէս և իցէ արատաւորէ զիս, բայց բոլոր նորա ջանքը ի զուր է. Այս ևս ասեմ, որ ես չունիմ անձնական տուն, այլ բնակիմ վարձու ի տան միոյ վաճառականի. Այս տան մի սենեկին հարկաւորեցաւ ծաղկաթերթը (արօյ) փոխել, յատակը և մի դռան սառնէքը ներկել. Իմ բացակայութեան ժամանակը Թիֆլիզից ես յանձնեալ էի վերոյիշեալ Պօպովին այն մի սենեկի նորոգութիւն կատարել իմ հաշւով, և մի և նոյն ժամանակ գնեցի և ետու իւրեան հարկաւոր եղած ծաղկաթերթը. Նա արդարև կատարեց իմ յանձնարարութիւնս, և ծախքը՝ որքան արել էր նա այս մասին, վերադարձուցի իւրեան, ստանալով ապահովագիր ծախս արած դրամոց, որովհետև ես ունիմ սովորութիւն դրամ տալոյ ժամանակ ամենից ստանալ ապահովագիր. Այս ապահովագրում Սարգիս Պօպովը գրել է, թէ ստացեալ է ինձանից ներկելոյ և ծաղկաթերթ կպցնելոյ վարձը և հատուցեալ է ներկարար Աշտոնեանցին. Այս ստորագրութիւնը այժմ գտանվումէ իմ մօտս և եթէ կբարեհաճի ինձ զրպարտող Ե. . եանցը կարող եմ ցոյց տալ կամ ներկայացնել ուր և կցանկայ ի խայտառակութիւն իւր ստութեան.

Պ. Ե , . եանցը բացի ստութիւն գրելից՝ ունի նա և մի այլ բնաւորութիւն՝ այն է չափազանցութիւն. Վերևը գրուեցաւ թէ միայն մի սենեկի արօյն փոխուեցաւ, մի յատակ և մի սառնէքայ ներկվեցաւ. իսկ նա որպէս զի գործին տայ մի չափազանցութիւն, գրել է բոլորը յոգնակի—սենեակներ, դռներ, լուսամուտներ, տախտակներ և յատակներ.

Պ. Յօդուածագրողը չյագենալով բարդել յիմ վերայ այսքան իւրավայել զրպարտութիւնները և իբր թէ մինչև ցայս վայր գրել է նա աւետարանական ճշմարտութիւններ՝ վերջացնումէ իւր յօդուածն այսպէս. «Են ևս այլ և այլ համանման «անցքեր ի նպաստ քաակի . . . . բայց ես չկա«մենալով յօդուածս երկարացնել, վասնորոյ «լսեմ, որ նա և թէ վիճակաւոր Առաջնորդի «փոխանորդն նա ևս (այսինքն ես) իւր հրամա«բականը տուեց՝ մի և նոյն ժամանակը իւր հա«շիւները ներկայացնելով Առաջնորդին, առանց «յայտնելոյ ժողովրդեան,,,

Ո՛հ անմեղ գառնուկ յօդուածագրող և ճշմարտութիւն քարոզող. ես ասեմ ձեզ. — եթէ ունենայիք առիթ ինչ հաստատ զիս մեղադրելոյ,

համոզուած եմ՝ ես որ՝ ոչ թէ ընդ կրաւանաւ կը թագաւցանէիք և կէտաւորութեամբ կանցնէիք զայն, այլ ի վերայ աշտանակի կրազմեցնէիք· բայց ձեր զմրախտութենից ոչ եղել է և ոչ կարող է լինել ինչ։ Իսկ ինչ կվերաբերի իմ հրաժարականի տալուն այդ ես ծիծաղելի զրպարտութիւն է։ Ասացէք՝ ի՞նչ կապ ունի իմ հրաժարական տալը Առաջնորդի փոխուելոյ հետ։ Այս տեղ ես իմ չարաբանողը սայթաքմունք և թիւր մտնութիւն է տալի գործոյն. ես ընտրուած էի ի պաշտօն երեսփոխանութեան երեք տարով. ի 1 փետրվարի 1873 ամի մինչ այդ պաշտօնում և ի 1876 թուականի Փետրվարի 1 ին լրացնելով իմ պաշտօնաժամանակը՝ տուի հրաժարական կանոնաւոր ձեւով։ Այլ և գրել թէ իմ հաշիւներս Առաջնորդին եռաւ առանց յայտնելոյ ժողովրդեան։ Այստեղ ես արդեօք յօդուածագրողին չէ յաջողել իւր զժղեային նախանձը յառաջ տանել· ահա՛ բացատրենք։ իմ երեսփոխանական հաշիւները յնթացս երեք ամաց ներկայացրել եմ՝ նախ ժողովրդից ընտրած հաշուատեսներին և ապա նոցանից վաւերացեալ՝ ժողովրդեան մատեանները ներկայացրել եմ ոչ թէ Առաջնորդին, այլ որպէս կարգն է՝ վիճակային կոնսիստորիային ի վերագննութիւն։

Թէպէտ և վերոյիշեալ յօդուածի առաջաբանի մէջը գրած է թէ «պատասխանատուութիւնը «արդեօ Գ. Ն. եանցի վերայ թողլով՝ անկողմնա«կալութեամբ կհրատարակեմ հետեւեալը» յա«ւանելով զի որոց անկ է՝ կփութան նորա եւ կա«րեւոր բացատրութիւնները տալ կամ զգուշա«նալ» իսկ յօդուածի տակը դրած են այս ե«րեք գլխատառերը Գ. Ր. Ն(*)։ Երևի երկոքեան ես համախոհ, համանման և համարձակ անձինք են, որ խելքը խելքին տալով սանդձել են վերոյիշեալ պարսաւական զրպարտութիւնները· աշխատելով եթէ կարելի է՝ տարացնել իմ վարկը ընթերցողների աչքումը։

ՎԱՍԻԼ ԽՈՋԱՅԵԱՆՑ·

Տէրէն·:

(*) Այս է ուղիղը։ Բայց թէ մի քանի՞ անձինք են գրողները· զայն չգիտեմք։ Ծ· Խմբ·

Ա· ԵՊԻՍԿՈՊՈՍ·

Ս. Էջմիածնի Միաբաններէն Աբէլ Եպիսկոպոս Մխիթարեանց ի 12ն ամսոյս իւր մահկանացու կենաց ընթացքը կնքեց, և ի յաջորդ աւուրն եկեղեցական հանդիսիւ մարմինը Միաբանութեան գերեզմանատանը ի հող ամփոփեցաւ։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ·

Ահաւասիկ հետեւեալն է այն նամակը՝ որոյ համար ք—ա—ծ—ա—ն—ը—ե—՞ + վերնագրով յօդուածոյ տուժիւ վերը խօսեցանք։

ԸՆԴԴԷՄ ԲԱՐԲԱՆՋՄԱՆՑ·

Կալկաթա, 13 սեպտ. 76

· · Խմբագրի և Տէր Մասիս լրագրոյ·

Ռանգունայ Պ. Ս. Մ. Մանուկ բարեկամէս նամակ ստացայ, որուն մէջ գիր մը կայր Իզմիր Պարոն Ղուկաս Պալդազարեանին հասուցանելու, որ է Ջուղայու և Հնդկաստանի Թեմական Առաջնորդ Սրբազան Գրիգորիս Արքեպիսկոպոսի Բրմանստանի թագաւորին ներկայանալուն ճշգրիտ պատմութիւնը։ Յայտնի է ձեզ՝ որ այս նիւթիս վրայ քանիցս գրեց Արշալոյսը՝ Կալկաթու թղթակցին ինքնօրէն չարայարեալ քողարկեալ երգիծական պատմութիւն ձեւացնելով։ Մեզ անյայտ է թէ ինչ կերպիւ Պ. Պալդազարեանը կըզրուցի Կալկաթու իրեն թղթակցէն. միայն այսքանս յայտնի է Հնդկաստանի բնակչաց, որ իրեն թղթակիցն ինչ լուր որ հաղորդէ՝ կապուի տալու՝ ճշմարտութեան ու ստութեան չի նայելով. ընդ հակառակն՝ նորա թղթակցի գրութեան դէմ որ և է ճշմարտութիւնը չի հրատարակեր։

Մէկ մասին Պ. Պալդազարեանը մեղադրելու չէ. թղթակցին այնպիսի կատարելութիւն մ՚ունի